ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

29 մարտի 2016 թվականի **թիվ 8** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումների VI հատորում փոփոխություն կատարելու մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան, «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 18-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան,

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի մայիսի 16-ի «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում եւ լայնության նկատմամբ երկարության 3 կամ ավելի հարաբերակցությամբ ամբողջովին ծեծած երկարահատիկ բրնձի մասով Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 39 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝

կիրառել Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումները

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի մարտի 12-ի թիվ 4 հանձնարարականի հավելված)՝ հաշվի առնելով փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
հանձնարարականի
2016 թվականի մարտի 29-ի
թիվ 8 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումների VI հատորում կատարվող

10-րդ խմբում՝

1-ին լրացուցիչ ծանոթագրության «գ» եւ «է» ենթակետերում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ «1006 30 670 0» եւ «1006 30 980 0» ծածկագրերը փոխարինել համապատասխանաբար ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ «1006 30 670» եւ «1006 30 980» ծածկագրերով.

լրացնել հետեւյալ բովանդակությամբ Եվրասիական տնտեսական միության լրացուցիչ ծանոթագրություն՝

«Եվրասիական տնտեսական միության լրացուցիչ ծանոթագրություն՝

1. 1006 30 670 1 եւ 1006 30 980 1 ստորաենթադիրքում ընդգրկվում է ամբողջովին ծեծած երկարահատիկ բրինձ՝ լայնության նկատմամբ երկարության 3 կամ ավելի հարաբերակցությամբ, որի առնչությամբ, երրորդ կողմի հետ Եվրասիական տնտեսական միության միջազգային պայմանագրերին համապատասխան, սահմանված է սակագնային քվոտա՝ իրավասու մարմնի կողմից տրված լիցենզիայի առկայության դեպքում:»: